ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի
2013թ-ի օգոստոսի 30-ի նիստի

Օրակարգ

1. 2013-2014 ուս. տարվա նախապատրաստական աշխատանքների մասին հարցը:
2. Պրոֆեսոր Վ. Բայբուրդյանի 80-ամյակի կապակցությամբ պարգևատրման ներկայացման մասին հարցը:
3. Ատենախոսության թեմաների հաստատման հարցը:
4. Դոցենտի կոչման համար ընտրության անցկացում:
5. Ընթացիկ հարցեր/ ա/ Ա. Կիրակոսյանի մենագրության երաշխավորության հարցը, բ/ ԵՊՀ գիտական խորհրդում Միջազգային հարաբերությունների ֆակուլտետից ներկայացուցչի փոփոխման հարցը,

Խորհուրդը որոշեց.

1. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի առկա ուսուցմամբ 3-րդ կուրսի ասպիրանտ Տիգրան Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ֆրանսիայի հետ (1998-2013թթ.)», «ԻԳ.00.00 - Միջազգային հարաբերություններ» մասնագիտացմամբ: Գիտական ղեկավար հաստատել պ.գ.դ., պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանին:

2. Հրատարակության երաշխավորել Արման Կիրակոսյանի «ԱՄՆ արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (XIX դար - 1914թ.)» մենագրությունը:

3. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետից ԵՊՀ գիտական խորհրդի կազմում ընդգրկվելու համար առաջարկել Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պ.գ.թ., դոցենտ Մարութ Վարդազարյանի թեկնածությունը:

4. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար ԵՊՀ Միջազգային հարաբերութունների և դիվանագիտության ամբիոնի ասիստենտ Գրիգոր Բալասանյանի անունը:
բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն:
գ/ Հաստատել Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն ու հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 22 անդամներից քվեարկությանը մասնակցել են 17-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Բալասանյան Գրիգոր – 17 կողմ,
դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

5. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար ԵՊՀ Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ Անահիտ Աբրահամյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն:

գ/ Հաստատաել փակ գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 22 անդամներից քվեարկությանը մասնակցել են 17-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Աբրահամյան Անահիտ – 17 կողմ,

դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Խորհրդի նախագահ, պրոֆ. **Գ. Պետրոսյան**

Խորհրդի քարտուղար, դոց. **Խ. Գալստյան**